

ՕԹԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ԿՈՉ ՈՒՂՂԵՏ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐ ԱՉԳԵՏՈՒԹԻՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱԳԻ ԳՕՏԻ ՄԵՋ ԼԱՐՈՒՍԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՂՄԱՅՆԵԼՈՒ

ՕԹԱՆ առաջին անգամ ըլլալով Թուրքիոյ կոչ ուղղած է՝ օգտագործելու իր ազդեցութիւնը տարածաշրջանին մէջ, որպէսզի նուազեցնէ Լեռնային Ղարաբաղի մէջ լարուածութիւնը: «Արմէնփրէս»-ի փոխանցմամբ, ինչպէս կը յայտնէ ԹԱՍՍ, այս մասին յայտարարած է ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղար Եսա Սթոյթենպերկ: «Թուրքիան կը հանդիսանայ ՕԹԱՆ-ի արժեքաւոր անդամ, սակայն ես նաեւ Թուրքիայէն կ'ակնկալեմ տարածաշրջանին մէջ իր զգալի ազդեցութեան օգտագործում (Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիին մէջ «Ա.») լարուածութիւնը նուազեցնելու համար», կ'ըսէ Սթոյթենպերկ:

ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԵՅԱԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԻՐԻ ԱՅՍՕՐ ԿԸ ԽՈՐՀՐԳԱԿՑԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՊԼՈՔՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երէկ առաւօտեան ժամը 9:00-ին, նախագահական պալատին մէջ սկսաւ վարչապետի նշանակման երեսփոխանական պարտադիր խորհրդակցութիւններուն, որոնց աւարտին վարչապետի պաշտօնի միակ թեկնածու Սաստ Հարիրի նշանակուեցաւ վարչապետ:

Նախագահական պալատին մէջ տեղի ունեցած խորհրդակցութիւններէն ետք Սաստ Հարիրի 65 քուէով դարձաւ վարչապետ, մինչդեռ 53 այլ երեսփոխաններ մերժեցին ռեւէ մէկուն թեկնածութիւնը առաջադրել, իսկ երկու երեսփոխաններ՝ Միշել Մըր եւ Թալալ Արսլան, ներկայ չգտնուեցան խորհրդակցութիւններուն:

Միւս կողմէ, հակառակ Պաապտայէն իր բացակայութեան, երեսփոխան Ատնան Թրապուլսի առաջադրած էր Սաստ Հարիրի թեկնածութիւնը:



արագ ժամանակամիջոցին կազմել, որովհետեւ անկիւ մեր երկրին համար առկայ միակ է վերջին առիթն է», ըսաւ ան:

Շար.ը՝ էջ 2



Շուրջ 5 ժամ տեւած խորհրդակցութիւններէն ետք նախագահ Աուն խորհրդակցեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ, եւ Սաստ Հարիրին պաշտօնապէս հրահրուեցաւ Պաապտայէն ստանձնելու համար նոր կառավարութեան կազմութեան պարտականութիւնը:

Նախագահական պալատ ժամանած Հարիրի հանդիպում ունեցաւ նախագահ Աունի եւ Պըրրիի հետ:

Հանդիպումէն ետք Պըրրի ըսաւ. «Յոռետեսութիւնը մեր բոլորին վրայ վատ ազդեցութիւն կը ձգէ, սակայն կը հաստատեն, որ նախագահ Աունի ու Հարիրիի, ինչպէս նաեւ Մուսթաֆայի հոսանքին եւ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան միջեւ լաւատեսական մթնոլորտ կը տիրէ»:

Ան յայտնեց, որ կառավարութեան կազմութիւնը նախատեսուածէն շատ անելի արագ պիտի կատարուի:

Ապա Նորանշնակ վարչապետ Սաստ Հարիրի դիտել տուաւ, որ նախագահ Աուն՝ ներկայութեամբ Պըրրիի, զինք նշանակած է վարչապետ:

Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն երեսփոխաններուն, որոնք առաջադրեցին իր թեկնածութիւնը՝ անընդհատ, որ ինք կը փափաքի կազմել մասնագետներու կառավարութիւն մը, որուն անդամները անկուսակցական պիտի ըլլան:

«Նոր կազմութիւնը կառավարութեան նպատակը պիտի ըլլայ ֆրանսական նախաձեռնութեան բովանդակած տնտեսական, էլեմտական եւ վարչական բարեկարգումները գործադրել», ըսաւ ան:

Իր խօսքը ուղղելով բազմաթիւ դժուարութիւններ դիմագրաւող եւ յուսալքուած լիբանանցիներուն՝ Հարիրի ըսաւ, որ ինք յանձնառու կը մնայ Լիբանանի տնտեսութեան, ընկերութեան եւ ապահովութեան քայքայումը կասեցնելու, ինչպէս նաեւ Պեյրութի նահանգիստին գործած անէրը հարթելու եւ մայրաքաղաքը վերակառուցելու իր խոստումին: «Այս նպատակով պիտի աշխատիմ կառավարութիւնը ամենէն

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ԱՌԱՋԱԳՐԵՑ ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

«ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊԱՐՏԻ ԳՈՐԾԱԿՑԻԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ»

ՇԵՏԵՑ 3. ԲԱԳՐԱՏՈՒՄ



Վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններու շրջագիծին մէջ, Հայկական երեսփոխանական պլոքը երէկ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի հետ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ կը զօրակցի Սաստ Հարիրի թեկնածութեան:

Հանդիպումէն ետք ՀՀԿ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց, որ Հայկական երեսփոխանական պլոքը վարչապետի պաշտօնին համար առաջադրած է Սաստ Հարիրի թեկնածութիւնը:

Շար.ը՝ էջ 2

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ G20 ՄԻՋԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ՝ ԻՐԲԵՒ ԳԼԽԱՒՈՐ ԳԱՍԱԽՕՍ



Անցեալ շաբաթ չորս օրերու վրայ տարածուած միջկրօնական միջազգային համագումար մը տեղի ունեցաւ՝ Սեւտական Արաբիոյ մէջ գումարուելիք G20-ի օրակարգի հարցերու քննարկման յատկացուած: Յայտնեց, որ վերջին տարիներուն G20-ի հանդիպումներուն առջնօրէն միջկրօնական համագումարներ տեղի կ'ունենան՝ պարզելու կրօններու ու քաղաքացիական կազմակերպութիւններու հայեցակետերը G20-ի կողմէ քննարկուելիք հարցերու շուրջ:

Շար.ը՝ էջ 4

«ՌՈՒՄԻԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՐՅԱԽԻ ՄԵՋ ԱՐԻՒՆԱՀԵՂՈՒԹԻՒՆԸ ԳԱԳՐԵՑՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐ ՓՆՏՈՒԵԼ»

Կ'ԸՍԵ ՉԱԽԱՐԿԱԿ

Ռուսիան կը շարունակէ աշխուժ միջնորդական ջանքեր գործադրել՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիին մէջ արհեստագործութիւնը դադարեցնելու նպատակով: Այս մասին երէկ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Չախարովա:

Շար.ը՝ էջ 4

ՉԱԹՈՒԼԻՆ ՉԻ ԲԱՅԱՌԵՐ ԱՐՅԱԽԻ ՄԵՋ ԱՆԿԱՐԳԵԼԱՌՈՒՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Ռուսիոյ պետական Տումայի Անկախ պետութիւններու հասարակապետութեան (ԱՊՀ) եւ Եւրասիական համարկման հարցերով յանձնախումբի փոխնախագահ Քոնսթանտին Չախուրի չէ բացառած, որ Ռուսիոյ՝ Լեռնային Ղարաբաղի մէջ կացութեան արձագանգելու տարբերակներէն մէկը ըլլայ անկարգելաւորներու գործողութեան իրականացումը:

Շար.ը՝ էջ 4

ՈՒՍՇԻՆԿԹԵՐԻ ՄԵՋ ԵԱՀԿ-Ի ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱԳԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ



ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի Ռուսիոյ համանախագահ Իկոր Փոփով Լեռնային Ղարաբաղի տագնապի հարցով քննարկումներուն համար մեկնած է Ուաշինկթըն, ուր տեղի պիտի ունենայ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու հանդիպումը: Այս մասին ԹԱՍՍ-ին յայտնած է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ռիապչով:

«Յատուկ յանձնարարութիւններու մեր դեսպան Իկոր Փոփով մեկնած է Ուաշինկթըն: 23 հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղի հարցով Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու հետ հանդիպումներ պիտի ունենայ: Պիտի

կայանայ նաեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու հանդիպումը», ըսած է Ռիապչով:


• Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան հերքեց Ազըրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի յայտարարութիւնը, ըստ որուն, Արցախի եւ Իրանի սահմանը ամբողջովին Ազըրպէյճանի բանակի վերահսկողութեան տակ է: Ան նշեց, որ սահմանի ամբողջ երկայնքով կ'ընթանան յամառ մարտեր:

Շար.ը՝ էջ 4

ՓՈՒԹԻՆ ՅՈՅՍ ԿԸ ՅԱՅՏԵՆ, ՈՐ ՈՒՍՇԻՆԿԹԵՐ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԵՏ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐՅԻՆ ՄԵՋ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին յոյս ունի, որ Միացեալ Նահանգներ պիտի օգնեն Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման: ԹԱՍՍ կը հաղորդէ, որ Փութին այս մասին յայտնած է «Վալտայ» ակումբի նիստին ընթացքին:

Շար.ը՝ էջ 2



ԱԼԻԵՒ ՉԵ ԲԱՅԱՌԱԾ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵՋ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՄԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւ չէ բացառած Մոսկուայի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման կարելիութիւնը, սակայն նշած է, որ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինէն տակաւին Ռուսիոյ մայրաքաղաքը այցելելու հրաւեր չէ ստացած:

Ռուսական «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Ազրպէյճանի նախագահը այս մասին յայտարարած է ճափոնական «Նիքքէի» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին:

«Ատիկա հնարաւոր է, որովհետեւ նախապէս ալ եղած են նման հանդիպումներ: Եթէ այդպիսի հանդիպում ըլլաւ, առիթ կախեալ պիտի ըլլայ օրակարգի բովանդակութեան: Ցաւօք, Հայաստանի ներկայ կառավարութեան հետ տագնապի խաղաղ լուծման հեռանկարները շատ հեռու են», ըսած է Ալիեւ:

«ԿՈՂՄԵՐԸ ՉԵՆ ԿԱՏԱՐԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵՋ ՀՐԱԳԱԳԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Կ'ԸՍԵ ՓԵՏՔՈՎ

Ղարաբաղի տագնապի կողմը ազրպէյճանական արցախեան սահմանագոտիին մէջ զինադադարի դրութեան եւ մարդասիրական հրադադարի մասին համաձայնութիւնները չեն իրագործեր: ԹԱՍՍ կը հաղորդէ, որ այս մասին լրագրողներուն յայտնած է Ռուսիոյ նախագահի մամլոյ քարտուղար Տմիթրի Փետրով:

Շար.ը՝ էջ 4



ՍԱԿՏ ՀԱՐԻՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԻ ՎԱՐՉԱՊԵՏ . . .

Շարունակում Ա. Էջեն

Նշենք, որ Նախագահ Անու խորհրդակցությունները սկսաւ նախկին վարչապետ Նեժիպ Միքաթի, որ առաջադրեց Զարիրիի թեկնածուները:

Միքաթի մաղթեց, որ բոլոր շնքերը մեկտեղվին՝ կազմելու համար աշխուժ և կարողություններով օժտուած կառավարության մը, որ ի վիճակի կ'ըլլայ բարեկարգումներ կատարելու և Լիբանանի նկատմամբ ներքին ու արտաքին վստահությունը վերականգնել:

Միքաթի նշեց, որ Նախագահ Անուի հետ հանդիպումին ընթացքին յոյս յայտնած է, որ Նախագահ Անու սահմանադրութեան հիման վրայ իրաւարար ըլլայ եւ ոչ թէ կողմ:

Ապա Սաատ Զարիրիի հանդիպում մը ունեցաւ Նախագահ Անուի հետ եւ մեկնեցաւ առանց յայտարարութիւն կատարելու:

Նախագահ Անու ընդունեց Նախկին վարչապետ Թամմամ Սալամը, որ առաջադրեց Զարիրիի թեկնածուները:

Սալամ մաղթեց, որ քաղաքական բոլոր ուժերը կ'օժանդակեն Զարիրիի՝ կառավարութիւնը կազմելու առումով, եւ հեռու կը մնան աշխատանքը արգելակելու ու խոչընդոտելու մօտեցումներէ:

Խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի Նախագահ Անուի հետ հանդիպելէ ետք յայտնեց, որ իր թեկնածուն Զարիրիի է, որովհետեւ ան պիտի կատարէ Լիբանանի քայքայումը:

Մուսթաքալ Կարտաբի վերահաստատեց Սամիր Ժըրը ըսաւ, թէ Կարտաբի առաջադրած է Զարիրիի թեկնածուները՝ մաղթելով, որ կառավարութեան կազմութեան հոլովոյթը կարճատեւ կ'ըլլայ:

Հաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխանական պլոքի նախագահ Մուհամմեդ Ռաատ, խորհրդակցելէ ետք Նախագահ Անուի հետ, յայտնեց, որ պլոքը ոչ ոքի թեկնածուները առաջադրած է: «Ազգային համախոհութիւնն ու փոխըմբռնումը Լիբանանը պահպանելու պարտադիր անցք մըն է», ըսաւ Ռաատ:

Ազգային համախոհութեան պլոքի անդամ Թունի Ֆրէսժի յայտնեց, որ պլոքը առաջադրած է Սաատ Զարիրիի թեկնածուները՝ աւելցնելով, որ հարկ է ամենէն արագ միջոցին կազմել կառավարութիւնը:

Ան դիտել տուաւ, թէ իրենց կը պահանջեն կառավարութիւն մը, որ կը ներկայացնէ լիբանանցիները եւ անոնցմէ կը հեռացնէ անիրաւութիւնը:

Ժողովարկավարական հանդիպում պլոքի նախագահ, երեսփոխան Ռայմոն Ժումայլա յայտնեց, որ իրենք առաջադրած են Զարիրիի թեկնածուները՝ փորձել փրկելու համար երկրին մնացորդագը:

Անկախ կեդրոնի պլոքին անունով երեսփոխան Շահ Կարտաբի առաջադրեց Զարիրիի թեկնածուները՝ մաղթելով, որ Աստուած անոր օգնական ըլլայ:

Ղովմի կուսակցութեան պլոքին անունով երեսփոխան Ասատ Զարտան գորակցութիւն յայտնեց Զարիրիի թեկնածութեան՝ կոչ ուղղելով ամենէն արագ ժամանակամիջոցին կազմելու կառավարութիւնը, որպէսզի կարելի ըլլայ անյապաղ ընդառաջել ժողովուրդին պահանջներուն եւ ընկերային թղթածրարը նկատել առաջնահերթութիւն:



«Զարիրիի պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը՝ փորձելու համար Լիբանանը», շեշտեց Զարտան:

Խորհրդակցական հանդիպում պլոքին անունով երեսփոխան Ռախիւ Սըքքարի յայտնեց, որ պլոքը ոչ ոքի թեկնածուները առաջադրած է: Ան յոյս յայտնեց, որ կառավարութիւնը արագ կեդրով կազմուի:

Զգոր հանրապետութիւնի պլոքի անունով երեսփոխան ժորժ Ատուն ըսաւ, որ պլոքը ոչ ոքի թեկնածուները առաջադրեց՝ հաստատելով, թէ քաղաքական ներկայ դասակարգը լուրջ քննութեան դիմաց կը գտնուի:

Անկախ երեսփոխան Էտի Տեմիրճեան գորակցութիւն յայտնեց Զարիրիի թեկնածութեան:

Անկախ երեսփոխան Միշել Տահեր առաջադրեց Զարիրիի թեկնածուները՝ հաստատելով, որ ներկայ պահը քաղաքական քիւնայնութիւններէ պարմար պահ չէ:

Անկախ երեսփոխան Նուհատ Մաշնուք առաջադրեց Զարիրիի թեկնածուները եւ կոչ ուղղեց՝ կազմելու մասնագետներու կառավարութիւն մը:

Անկախ երեսփոխան Ռաամա Սաատ ոչ ոքի թեկնածուները առաջադրեց՝ յայտնելով, որ իրեն համար արժանի թեկնածուներ չկան:

Անկախ երեսփոխան Ֆուատ Մախաբա ընդգծեց, որ ինք Զարիրիի թեկնածուները չէ առաջադրած: «Կարելի չէ ժողովուրդը նորութեամբ մը համոզել» նկատի ունենալով այն ձեւը, որով Զարիրի իր թեկնածուները առաջադրեց», շեշտեց ան:

Անկախ երեսփոխան Շամել Ռուզբոզ կոչ ուղղեց՝ անյապաղ կազմելու կառավարութիւն մը: Ան ոչ ոքի անունը առաջադրեց վարչապետի պաշտօնին համար:

Անկախ երեսփոխան Շամիլ Մեյիտ ոչ ոքի թեկնածուները առաջադրեց՝ հաստատելով, որ Սաատ Զարիրի Նոյն անձնաւորութիւնն է, ինչպէս որ էր երբ նախկին վարչապետ էր, եւ մարդիկ չեն փոխուիր:

Անկախ երեսփոխան ժիհատ Սամատ առաջադրեց Զարիրիի թեկնածուները:

Երեսփոխան Շահ Թալուգեան առաջադրեց Զարիրիի թեկնածուները՝ նշելով, որ այս հարցով տարակարծիք է Զգոր հանրապետութիւն պլոքին հետ:

Զգոր Լիբանանի համախմբումի նախագահ, երեսփոխան Շըպրան Պասիլ յայտնեց, որ իրենք Զարիրիի թեկնածուները չեն առաջադրեցին՝ ընդգծելով, թէ իրենք կը փափաքէին, որ յաջորդ կառավարութիւնը ըլլայ մասնագետներու կառավարութիւն՝ վարչապետով եւ նախարարներով:



Պասիլ դիտել տուաւ, որ իրենց կեցուածքը քաղաքական է եւ բնաւ անձնական ենթացիչ չէ:

Լեռնալիբանանի երաշխիք պլոքին անունով երեսփոխան Մարիո Անու ըսաւ, որ այս պլոքը Զգոր Լիբանանի համախմբումին անմասնատելի մէկ բաժնի է, հետեւաբար պլոքը ես ոչ ոքի թեկնածուները առաջադրած է:

Ազատագրում եւ բարգաւաճում երեսփոխանական պլոքը առաջադրեց Սաատ Զարիրիի թեկնածուները՝ կոչ ուղղելով անյապաղ կազմելու փրկութեան կառավարութիւն մը:

Յետմիջօրեին Զարիրիի հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ նախկին վարչապետներ Նեժիպ Միքաթի, Ֆուատ Մի-նիրայի, Մելիմ Ղըչի, Թամմամ Սալամի ու Զասսան Տիպաի հետ եւ անոնց հետ համաձայնեցաւ: հեռաձայնային խորհրդակցութիւններով բաւարարուի՝ ապահովական պատճառներով:

Նախկին վարչապետները Զարիրիի յաջորդութիւն մաղթեցին՝ նոր կառավարութիւն մը կազմելու իր պարտականութեան մէջ:

Միւս կողմէ, լրագրողներուն հետ իր ունեցած գրոյցին ընթացքին, Զարիրի յայտնեց, որ թէ երկրին շահերը բոլորին միջեւ փոխըմբռնում կ'ենթադրեն, ապա հարկ է երկրին շահերը գերազանց դասել:

Պասիլի հետ հանդիպումի մը հաւանականութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Զարիրի յայտնեց, որ ինք ոչ պարտադիր խորհրդակցութիւններուն շրջագիծին մէջ հանդիպումներ պիտի ունենայ երեսփոխանական պլոքներու նախագահներուն հետ: Վարչապետ Զարիրի այսօր յետմիջօրեին խորհրդարանին մէջ պիտի կատարէ կառավարութեան կազմութեան նպատակով երեսփոխանական ոչ պարտադիր խորհրդակցութիւններ:

Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Իան Զիլաիջ երեկ ընկերային ցանցերուն վրայ տեղադրած իր գրառումին ընդմէջէն շեշտեց, որ ոչ մէկ երկիր, յատկապէս՝ Լիբանանի նման աղիտալի պայմաններ դիմագրաւող երկիր մը, կրնայ շարունակել առանց աշխուժ եւ բարեկարգումի ձգտող կառավարութեան:

Զիլաիջ յայտնեց, որ աւանդական քաղաքական ուժերը դարձեալ իրենց ուսերուն առած են յառաջիադաք արձանագրել եւ, հակառակ իրենց անցելի բացթողումներուն, կառավարութիւն մը կազմել:

«Անոնք պէտք է օժանդակեն վարչապետ Սաատ Զարիրիի՝ կազմելու համար կառավարութիւն մը, որ կարողութիւն պիտի ունենայ գործընդեր յստակօրէն պահանջուած բարեկարգումները: Արտաքին աշխարհէն հրաշքեր մի՛ սպասեց: Փրկութիւնը պէտք է սկսի Լիբանանի մէջ Լիբանանի միջոցով», շեշտեց Զիլաիջ:

- ԵՐԵՎԱՆԻ խումբ մը երիտասարդներ երկու ուղղութեամբ փակեցին Սայֆիի մայրուղին, ինչպէս նաեւ այլ խումբ մը համախմբութեամբ ժալ է Տիպի կամուրջին մօտ՝ բողոքելով Զարիրիի վարչապետ վերանշանակումին դէմ:

ՓՈՒԹԻՆ ՅՈՅՍ ԿԸ ՅԱՅՏԵ, ՈՐ ՌԻԱՇԵՒԿՈՒՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԵՏ . . .

Շարունակում Ա. Էջեն

«Երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները հերթական անգամ եկած էին մեր մօտ (Մոսկուա): Գոկտեմբեր 23-ին անոնք հանդիպում ունին Ռաշիսկիեի մէջ: Ես մեծ յոյսեր ունիմ, որ մեր ամերիկացի պաշտօնակիցները պիտի գործեն մեզի հետ միատեղ եւ պիտի օգնեն տագնապի լուծման», ըսած է Ռուսիոյ նախագահը:

«Ռուսիան մնայուն կերպով ունեցած է առանձնայատուկ կապեր Յայաստանի եւ Ազրայէճանի հետ», յայտարարած է ան՝ աւելցնելով. «Ասիլից սկիզբէն՝ Լեռնային Ղարաբաղէն, եւ թէ որով կ'աջակցին: Մենք ըսած ենք, որ Ռուսիան միշտ ալ ունեցած է յատուկ կապեր Յայաստանի հետ: Սակայն մենք յատուկ կապեր ունեցած ենք նաեւ Ազրայէճանի հետ: Ռուսիոյ մէջ կ'ապրին շուրջ երկու միլիոն ազրայէճանցի եւ աւելի քան երկու միլիոն հայ: Ատոնք ոչ միայն մարդիկ են, որոնք եկած են ժամանակաորայեւ աշխատելու համար, այլ նաեւ անոնք այստեղ կ'ապրին գործնականին մէջ՝ մնայուն կերպով», ըսած է ան: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱՆ Երեսփոխան»-ն:

Փութին նաեւ ըսած է, որ Ռուսիոյ համար Յայաստանն ու Ազրայէճանը հաւասար գործընկերներ են, եւ Ռուսիոյ համար որբեր գութինն է, որ այնտեղ մարդիկ կը գոհուին: «Կ'ուզենք լիարժէք յարաբերութիւններ թէ՛ Յայաստանի, թէ՛ ալ Ազրայէճանի հետ», ըսած է ան:

Ռուսիոյ նախագահը յայտարարած է, որ շատ պիտի ուզէր փոխգիշուր գտնել Ղարաբաղեան տագնապին առեւտուած եւ ան օրական բանի մը անգամ հեռաձայնային գրոյցներ կ'ունենայ Յայաստանի եւ Ազրայէճանի ղեկավարներուն հետ:

Փութին յայտարարած է, որ ղարաբաղեան տագնապը հայկական կողմին ու Ազրայէճանի միջեւ նախապէս եղած է ազգային ճա-

կատում եւ սկսած է հայ ժողովուրդին հանդէպ գործուած յանցազորութիւնները: «Այս տագնապը չէ սկսած իբրեւ միջպետական տագնապ՝ իբրեւ երեսփոխաններու համար պայքար, այլ սկսած է իբրեւ ազգային ճակատում: Յաւալիօրէն փաստ է, որ Սոււմլայիի մէջ, յետոյ ալ Լեռնային Ղարաբաղի մէջ հայ ժողովուրդին հանդէպ յանցազորութիւններ գործուած է, եւ այս ամէնը պէտք է հաշուի առնուի», ըսած է ան:

Փութին նաեւ նկատած է, որ Ազրայէճան կորսնցուցած է իր տարածքներու զգալի մասը, եւ ատիկա յաւերժ չի կրնար շարունակուի: Ռուսիոյ նախագահը յայտնեց. «Ռուսիոյ եւ Թուրքիոյ դիրքորոշումները միշտ չէ, որ կը համընկնին, յատկապէս Յարաւային Կովկասի մէջ, սակայն Լեռնային Ղարաբաղի տագնապի հարցով եթէ բանակցութիւնները երեսուն տարուան ընթացքին արդիւնք չեն տար, ատիկա չի նշանակեր, որ պէտք է սկսի կրակել: Մոսկուան կը գորակցի քաղաքական լուծման»:

«Ատիկա Թուրքիոյ նախագահին յաջորդական դիրքորոշումն է. ան չի ճանչնար Իրիմը, չի ճանչնար Լեռնային Ղարաբաղը: Սակայն ինչ է մեր կացութիւնը: Պէտք է յամառօրէն աշխատինք բոլորին հետ, գիտնելու համբերութեամբ, ինչ որ կ'ընենք, ապացուցենք բոլորին, որ մեր դիրքորոշումը ճիշդ է, եւ մենք մեր մօտեցումներն ու դիրքորոշումները չեն համընկնիր, պէտք է փոխգիշուր փնտռել», ըսած է Ռուսիոյ ղեկավարը:

«Այնպէս կը հասկնամ, որ Յարաւային Կովկասի հարցին մէջ մեր դիրքորոշումները չեն համընկնիր, որովհետեւ մենք կը կարծենք, թէ վիճարարոց հարցերը, այնուամենայնիւ, պէտք է լուծուէ ոչ թէ ուժի միջոցով, ոչ թէ գէնից օգնութեամբ, այլ դիւանագիտական միջոցով՝ բանակցութիւններու սեղանին շուրջ», աւելցուցած է Փութին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒՆԱՐԱԿԱՆ ...

Շարունակում Ա. Էջեն

«Այսօր, քանդուած երկրի մը եւ իր յոյսը հետզհետէ կորսնցնող ժողովուրդի մը դէմ յանդիման գտնուելով, անկարելի է գերազանց պատասխանատուութեամբ չկարողիլ եւ ազգային մեր պարտականութիւնը չկատարել» երկրին ու քաղաքացին փրկելու նպատակով:

«Սեզի հասցուցած են այնպիսի փուլի մը, երբ իբրեւ ընտրանք ունինք միայն ֆրանսական նախաձեռնութիւնը, որուն յանձնառու մնալով հանդերձ, օրին մտավախութիւններ յայտնած էինք անոր կէտերուն գործադրութեան շուրջ»:



Սակայն ներկայիս կը գտնուինք երկիրը փրկելու պատասխանատուութեան դիմաց, իսկ պահանջուածը ամենէն արագ ժամանակամիջոցին փրկութեան կառավարութեան կազմութիւնն է: Դեռեւեաբար կոչ կ'ուղղենք՝ վերջ տալու նախապայմաններուն եւ հակապայմաններուն, աշխատելու երկիրը դարձեալ ոտքի կանգնեցնելու, քաղաքացիին վստահութիւնը վերականգնելու եւ Լիբանանին կառավարող արտաքին աշխարհին վստահութիւնը վերահաստատելու ուղղութեամբ:

«Այլընտրանքներու չգոյութեան դիմաց, Զայկական երեսփոխանական պլոքը որոշեց Սաատ Զարիրիի թեկնածուները առաջադրել, որպէսզի ան կազմէ յաջորդ կառավարութիւնը: Կը մաղթենք, որ Զարիրիի բաց գործակցութիւն ցուցաբերէ բոլորին նկատմամբ, եւ աշխատանքի ձեռք երկարէ բոլոր կողմերուն, որպէսզի կարելի ըլլայ կազմել ազգային փըրկութեան կառավարութիւն մը, որ կը համախմբէ բոլորը եւ կը գործակցի երեսփոխանական պլոքներուն հետ՝ ներկայացնելով լիբանանցիներուն ու յատկապէս երիտասարդ սերունդին ձգտումները»:

«Կը գտնուինք զգայուն փուլի մը մէջ, երբ ներդիկ հաշիւներու եւ երկար սպասելու ճիւղերը չունինք: «Նորանշանակ վարչապետը պէտք է նախաձեռնէ բաց գործակցութեան եւ արդիւնաւետ երկխօսութեան՝ յանգելու համար փրկութեան կառավարութեան կազմութեան: Ան պէտք է գործակցի ընտրապետութեան նախագահին հետ՝ բոլոր մակարդակներու վրայ ամբողջական բարեկարգումի իրականացման ի խնդիր», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչու Զայկական երեսփոխանական պլոքը, որ մաս կը կազմէ Զգոր Լիբանանի համախմբումին, տարբեր կեցուածքով ներկայացած է խորհրդակցութիւններուն՝ երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան հետ իբրեւ յաշնակցներ կատարեալ համաձայնութիւն ունինք, «սակայն երբեմն տարբեր տեսակետներ կը գոյանան. այս մէկը չի նշանակեր, որ մեր միջեւ հարցեր կան», եզրափակեց Յ. Բագրատունի:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ «ԿԸ ՊԵՆԱԿԵՆՔ ԿԱԶՄԵԼ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ, ԱՌԱՋ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԵՐՈՒ»

Յետմիջօրեին, «ժառիտ» պատկերասփիւռի կայանի հետ ունեցած իր հարցազրոյցը ընթացքին, երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ Զգոր Լիբանանի համախմբումի նախագահ, երեսփոխան Շըպրան Պասիլի հասկացողութիւն ցուցաբերած է Զայկական երեսփոխանական պլոքին կեցուածքին նկատմամբ՝ աւելցնելով, որ երեսփոխան Շահ Թալուգեան առանձինն որոշած է առաջադրել վարչապետ Զարիրիի թեկնածուները: «Դեռեւեաբար, այդ իմաստով կանխաւ համարում չէ կատարուած, սակայն յառաջիկայ օրերուն կարելի է հանդիպումներ ունենալ», ըսաւ ան:

Երեսփոխան Բագրատունի ընդգծեց, որ տակաւին շատ կանուխ է խօսելու նախարարութիւններ ստանձնելու մասին: «Մենք կը պահանջենք կազմել փրկութեան կառավարութիւն մը, առանց նախապայմաններու: Կարելի է կառավարութեան կազմութիւնն է եւ անոր նպատակներուն իրագործումը եւ ոչ թէ անուանումը: Անուանումներու թոհուրդին մէջ պէտք չէ ստնել, որովհետեւ այդպիսով խնդիրները կը բարդացնենք: Թող կազմուի փրկութեան կառավարութիւն մը, որուն մէջ լիբանանցիները գրեթէ ամբողջութեամբ կը ներկայացուին»:

«Կառավարութեան մաս պիտի կազմենք՝ մասնագետները բաղկացած ըլլայ անիկա թէ քաղաքական անձնաւորութիւնները»:

Երկիրը չի կրնար յայտնել ձգձգում հանդուրժել: Պէտք է կազմուի կառավարութիւն մը, որ տոկայ եւ բարեկարգումներ իրագործէ:

Կառավարութեան տրուելիք մեր վստահութեան քունէ կախեալ է հայ համայնքը ներկայացնող նախարարէն: Իսկ ընդհանուր առումով կարելի չէ ակունկալել, որ թէ վարչապետին թեկնածուները առաջադրած ենք, ուրեմն անոր մեր վստահութեան քունէ ալ շնորհած կը նկատուինք:

«Կառավարութեան կազմին է մշակելիք աշխատանքային ծրագիրին հիման վրայ է, որ երեսփոխանական պլոքները կ'որոշեն վստահութեան քունէ շնորհել, եւ այդ թիւը կրնայ աւելի մեծ ըլլալ՝ քան վարչապետին նշանակման խորհրդակցութիւններու աւարտին ստացուած թիւը», յայտնեց ան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԱՐԱՆԴ ՕՍՓԱՉԱՆԻ մահուան քառասունօրեան առթիւ ողբերգի կիրակի, 25 հոկտեմբեր 2020-ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՑԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՆԱԶՈՒՄՆԵՐ

- Աստորալիոյ մեծագոյն նահանգներէն մէկուն՝ Նոր Զարաւային Ուելլսի Օրէնսդիր ժողովը 61 թեր ձայնով պաշտօնապէս ճանաչած է Արցախի Զանապետութեան անկախութիւնը: Այս մասին կը տեղեկացնէ Աստորալիոյ 3այ դատի յանձնախումբը:

Խորհրդարանականները դատապարտած են նաեւ Ազրայեանի եւ Թուրքիոյ կողմէ յարձակումները Արցախի բնիկ հայերուն վրայ:

- Զալիֆորինոյ Ֆաուլըր քաղաքի քաղաքապետական խորհուրդը միաձայնութեամբ դատապարտեց Արցախի դէմ ազրայեանական բռնարարները՝ միեւնոյն ժամանակ ճանաչելով Արցախի ինքնորոշման իրաւունքը եւ անկախութիւնը:

Արեւմտեան Ամերիկայի 3այ դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, որ քաղաքապետական խորհուրդը նաեւ կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու նախագահին եւ Քոնկրէսին, որ նեցուկ կանգնին Արցախի ազատութեան աստարելու գործին:

Քարաքայտական խորհուրդի անդամ Գառնիկ Ղազարեան, որ ժողովին ներկայացուցած էր հռչակագիրը, նշեց, թէ հայերուն դէմ ցեղասպան պատերազմին ընթացքին Ֆաուլըր քաղաքը կանգնած է Արցախի կողքին:

- Արցախի արտաքին գործոց նախարարութեան հրապարակած հաղորդագրութեան համաձայն, Միացեալ Նահանգներու Լիւ Ճըղզի նահանգի Ֆորտ Լի քաղաքը դատապարտեց Արցախի վրայ Ազրայեանի յարձակումները եւ ճանաչեց Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքն ու Արցախի Զանապետութեան անկախութիւնը:

ՔԱՐԱՔԱՅԻՆ խորհուրդը
ԱԶՐԱԿԱՐԳՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐՈՒ
ԹԻՐԱՆՔԱՆՈՒՄԸ
ԳԱՏԱՊԱՐՏՈՂ
ՔԱՆԱՅԵՆ ՈՐԿԵՂՐԱՅԵՆ

Քաթալունիոյ խորհրդարանը 21 հոկտեմբերին որոշեց Վերջ տալու Լեռնային Ղարաբաղի մէջ զինուորական գործողութիւններուն եւ կը դատապարտէ Ազրայեանի զինեալ ուժերուն կողմէ քաղաքային բնակչութեան վրայ յարձակումները՝ շեշտելով, որ կը սատարէ կողմերուն միջեւ կառուցողական բանակցութիւններուն՝ ուղղուած ինքի խաղաղ լուծման, որ պէտք է հիմնուած ըլլայ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի մեծամասնութեան կամքի արտայայտութեան վրայ:

ՕՆԹԱՐԻՈՅԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ՄԻԱԶՆՆՈՒԹԵԱՐԸ
ԳԱՏԱՊԱՐՏԵՑ ԹՈՒՐՔ-ԱԶՐԱԿԱՐԳՆԵՐԻ
ՈՒՍԱՎԱԿԱՆ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ

Չորեքշաբթի, 21 հոկտեմբեր 2020-ին Օնթարիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ մէկ ժամ տասնհինգ վայրկեան տեւողութեամբ քննարկում՝ նիւթ ունենալով Թուրք-ազրայեանական լայնածիր ռազմական յարձակումները Արցախի ու Զայաստանի վրայ: Օնթարիոյ խորհրդարանի երեք կուսակցութիւններուն անդամները խստօրէն դատապարտեցին Ազրայեանի ու Թուրքիոյ զոյգ կառավարութիւններուն անմարդկային ոճիրը Արցախի հայութեան դէմ: Իշխող կառավարութեան երեք նախարարները իրենց ելոյթին ընթացքին ներկայանան իրենց արտաքին քաղաքական քայլերը, որ պայտարան թուրք-ազրայեանական զինեալ յարձակումները երկրորդ ցեղասպանութիւն են Արցախի եւ հայ ժողովուրդին դէմ: Երեսփոխանները առանց բացառութեան կոչ ուղղեցին միջազգային հանրային կարծիքին եւ համայն աշխարհի պետութիւններուն՝ անմիջապէս դադարեցնելու պատերազմը, հրադադարի համաձայնութեան պահպանման կարելորութիւնը շեշտելու եւ առիթ ընծայելու խաղաղ բանակցութիւններու ճամբով ինքի լուծման: Անոնք նաեւ պահանջեցին Արցախի ժողովուրդին ինքնորոշման արդար իրաւունքի յարգում: Երեսփոխանները իրենց խօսքերուն մէջ անորադարձան վարձկաններու ներկայութեան երեւոյթին եւ թրջական բանակին գործուն մասնակցութեան՝ Ազրայեանի բանակին կողքին: Նշեց, որ երեսփոխանները նաեւ պահանջեցին կատարելով Թուրքիոյ գէնը մատակարարումը բոլոր պետութիւններէն:



Թուրքիա մինչեւ օրս կը մերժէ Զայոց ցեղասպանութիւնը: Նշուեցաւ, որ Ազրայեան թիրախաւորած է անմեղները եւ ռմբակոծած անպաշտպան դպրոցներ, հիւանդանոցներ, եկեղեցիներ եւ մշակոյթի կեդրոններ: Այս վիճակի իբրեւ հետեւանք աւելի քան 90,000 արցախցիներ գաղթական դարձած են եւ ապաստանած Զայաստան, իսկ մնացեալ բնակչութիւնն ալ կ'ապրի ապաստարաններու մէջ: Ամենեւ ուշագրաւ այն է, որ մինչ Զայաստան առիթ կու տայ միջազգային մամլոյ ներկայացուցիչներուն, որ ազատօրէն սփռեն եւ անդրադառնան պատերազմական կացութեան, Ազրայեան արգիլած է անոնց գործունեութիւնը եւ ընդհատած համացանցի կապերը: Պէտք է նշել, որ այս նախաձեռնութիւնը կազմակերպուած էր Օնթարիոյ խորհրդարանի Պահպանողական կուսակցութեան անդամներ՝ Փոլ Զալանտրայի, Ռոս Ֆիլիպսի եւ Արիս Պապիկեանի կողմէ՝ համագործակցութեամբ Թուրքիոյ 3այ դատի յանձնախումբին: Արիս Պապիկեան խօսք առնելով պահանջեց Թուրքիան վտարել ՕԹԱ-էն, եւ դադարեցնել անոր անղամակցութիւնը տնտեսական G-20 Գաղթայի համախմբումին: Աւելին, ան պահանջեց նախագահներ Երտողանն ու Ալիեւը ներկայացնել միջազգային դատական ատենան՝ որպէս պատերազմի յանցագործներ: Պապիկեան կոչ ուղղեց համաշխարհային ընտանիքին՝ չլրկնելու Անգլիոյ նախկին վարչապետներէն Զամարիէի սխալը, որով հաճոյ պահելով երրորդ Ռայիւր Բ. համաշխարհային պատերազմի նախորդակին, պատճառ դարձաւ մեծ աղետին:

Քանատայի Օնթարիո նահանգի խորհրդարանի անդամ Արիս Պապիկեան նշեց, որ Թուրքիա եւ Ազրայեան պէտք է դատուին իբրեւ պատերազմի յանցագործներ, որոնք նաեւ կը կատարեն մարդկութեան դէմ ոճիրներ: Ան նաեւ յիշատակեց, որ Արցախ երբեք չէր ազրայեանական տարածք չէ եղած եւ այդ շրջանը նուր շնորհուած է Մթալիւնի կողմէ՝ Ազրայեանին: Շատ մը երեսփոխաններ նաեւ անդրադարձան այն իրողութեան, որ

«ԳՈՅԱՄԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ»
ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Table listing various items and their amounts in Armenian Dram (AMD). Includes categories like food, medicine, and other supplies.

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
• Զայոյ Սողոմոնեանի մահուան առիթով Տեր եւ տիկին Զայոյ եւ Միրնա Սարգիսեան կը նուիրեն
- Լիբանանահայ օգնութեան խաչին՝ 1000 ամ. տոլար
- Ազուկի Ազգային բուժարանին՝ 1000 ամ. տոլար
- Ազգային ծերանոցին՝ 1000 ամ. տոլար
- «Թռչնոց Բոյն»-ին՝ 1000 ամ. տոլար
- «Զայ աշակերտ հովանաւորելու ծրագիր»-ին՝ 1000 ամ. տոլար
• Դոկտ. Յարութիւն Սամուէլեանի մահուան առիթով Տեր եւ տիկին Զայոյ եւ Միրնա Սարգիսեան կը նուիրեն
- Լիբանանահայ օգնութեան խաչին՝ 1000 ամ. տոլար
- Ազուկի Ազգային բուժարանին՝ 1000 ամ. տոլար
- Ազգային ծերանոցին՝ 1000 ամ. տոլար
- «Թռչնոց Բոյն»-ին՝ 1000 ամ. տոլար
- «Զայ աշակերտ հովանաւորելու ծրագիր»-ին՝ 1000 ամ. տոլար

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
«ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՃԱՄԲՈՎ
Անթիլիասի մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի տեսչութիւնը անգամ մը եւս ձեռք կը հրապարակէ այցելուներ Մեծի Տանի Կիլիկիոյ կաթողիկոսութեան վերանորոգուած «Կիլիկիա» թանգարանը քաջալերելով հայորդիները, յատկապէս երիտասարդներն ու պատանիները, որ մեր պատմութեան հետ հաղորդուելով՝ սորվին, ճանաչեն եւ ներշնչուին մեր պատմական, եկեղեցական եւ մշակութային գանձերէն:
Թանգարանը հանրութեան առջեւ բաց է երեքշաբթիէն շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00-էն, երեկոյեան ժամը 5:00, իսկ կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 10:00-էն կէսօրուան ժամը 1:00:
• Մուտքը ազատ է:

Աղցանց Լսարան
Երկուշաբթի 26 հոկտեմբեր 2020-ին, Երեւանի ժամով՝ 18:00-ին:
Մասնակցութեան համար գրել minas77@gmail.com եւ նամակի կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)
ԱՐԶԱՆՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՑ
ՇԱՐՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՐԱՆՑՈՒԹՅՈՒՆ
Չեկուցաբեր՝ Դաւիթ Պապայեան
Արցախի հանրապետութեան նախագահի արտաքին հարցերու խորհրդակալ

ԱԶԳԱԿԵԱՆ ԿՐԱԿ ԲԱՅԱԾ Է ԻՐԱՆԻ ԽԱՂԱԳ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Ազրայեճան կրակ բացած է Իրանի սահմանամերձ քաղաքային տուններուն ուղղութեամբ: «Արմեն-փրես»-ի փոխնախագահը՝ «Թեյկրամ»-ի իրանեան «Ազա-րիա» ալիքը տեսանկար փրակարակած է՝ ցոյց տալով ազրայեճանական զօրքերու գործողութիւններուն իր-րեւ հետեւանք աւերուած իրանեան տունները: «Իրանի սահմանամերձ քաղաքային տունները աւերուած են՝ Պարսի գործողութիւններու, իր ուժերը իրանի սահ-մանին վրայ ամրակայելու պատճառով: Իրենց դիրքե-րը հիւսիս-արեւմուտ ուղղութեամբ տեղակայելու փոխա-րեն, Պարսի ուժերը տեղակայուած են արեւելք-արեւ-մուտք ուղղութեամբ», գրած է իրանեան ալիքը եւ յիշե-ցուցած, որ Ազրայեճան նաեւ անօդաչու թռչող սարքեր կ'ուղարկէ Իրան, բացի անկէ, որ ան հաւատարմորոշա-կան ահաբեկիչներ տեղակայած է իրանեան սահմանին վրայ:

«ՈՒՍԻՆԻՆ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԷ...»

Շարունակուած Ա. Էջէն

Ան յիշեցուց, որ տագնապի լուծման հարցերը քննարկուած են Մոսկուայի մէջ 20 եւ 21 հոկտեմբերին՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի եւ Չայնայի արտաքին գործոց նախարար Կուօնցիէն Լիուի հետ կայացած առանձին հանդիպումներու ընթացքին: «Ինչպէս նախապէս, հիմա ալ կ'աշխատենք ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութեան ձեւաչափով: Միջնորդներու հերթական հանդիպումը նախատեսու-ած է վաղը (այսօր «Ա.» Ուաշինկընի մէջ)», ընդգծեց Չայնայովը:

«ԿՈՂՄԵՐԸ ԶԵՆ ԿԱՏԱՐԵՐ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Առայժմ կարելի չէ արձանագրել, որ կրակոցի դադ-րեցման եւ մարդասիրական հրադադարի վերաբերեալ նախապէս ձեռք բերուած համաձայնութիւնները կը պահպանուին: Ցաւօք, կողմերը զանոնք չեն պահպա-ներ», ըսած է Փետրովը: «Ռաշա Թուրքի» իր կարգին հաղորդեց, որ Ռուսիոյ նախագահի բանբերը յայտնած է, թէ Ռուսիան ամէն ինչ կ'ընէ, որպէսզի Լեռնային Ղարաբաղի կացութիւնը տեղւորապէս թաղաքական-դիւանագիտական հուն՝ աւելցնելով, որ հարցի խաղաղ լուծումը այլընտրանք չունի: Բրեմինի բանբերը ընդգծած է, թէ Ռուսիան կը պատրաստուի հետագային եւս ամէն շանք ի գործ դնել տագնապի խաղաղ լուծման համար: «ՌԻՎ Նովոսթի» կը հաղորդէ, որ՝ խօսելով տագնա-պի լուծման գոյութիւն ունեցող ձեւաչափին երրորդ եր-կիրներու մասնակցութեան մասին՝ Փետրով ըսած է, թէ ինչորոշ ամբողջութեամբ կախեալ է տագնապի մաս-նակիցներու քաղաքական կամքէ: «Տագնապին մաս-նակիցները երկու են՝ Չայնայի եւ Ազրայեճանը, ուս-տի անոր լուծման մասնակցելու կամ միջնորդ ըլլալու համար պէտք է համաձայնութիւն տան երկու կողմե-րը», ընդգծած է Ռուսիոյ նախագահի մամլոյ քարտու-ղարը:

ՀԱՆԴԻՍԱԲՈՐ
Ս. ԵՒ ԱՆՍԱՀ ՊԱՏԱՐԱԳ- ԵՒ ԿԱՐԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵՆՈՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Սուրբ Նշան մայր եկեղեցւոյ անուանակոչու-թեան տարեդարձին առիթով, կիրակի, 25 հոկ-տեմբեր 2020-ին պիտի պատարագ եւ քարոզէ Թեմի բարեշնչան առաջնորդ՝
ԳԵՐՇ. ՏԵՐ ԸԱՀԷ ԱՐՔ. ՓՆՆՈՍԵԱՆ
Այս առիթով, սրբազան հօր ձեռամբ պիտի կատարուի նաեւ Պելլուրթի սուահանգիստի պայտօմին իբրեւ հետեւանք կնասեր կրած Մայր եկեղեցւոյ օրհնութեան կարգը:
Սկիզբ Ա. պատարագի՝ ժամը 9:30
Սիբով կը իրաւիրենք մեր հաւատացեալ ժո-ղովորդը ներկայ գտնուելու հոգեպարար արա-րողութեան:
ԴԻՆԱ ԸԱԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՈՒՍԻՆԻՆ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԷ... ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԸ Ա. ԷՋԷՆ

Շարունակուած Ա. Էջէն

Ան կոչ ուղղեց՝ խուճապի ջնարկուե-լու ազրայեճանական ներթափանցող խուճապի մարտերու հրապարակած լուսանկար-ներէն, որոնք կը մտնեն, կը լուսանկար-ուին եւ կը հեռացուին: ● Արցախի պաշտպանութեան բա-նակի հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումները խոցած են Ազըր-պեճանի կողմէ կիրարկուող թըրքական արտադրութեան հերթական «Պարաք-տար» անօդաչու թռչող սարքը: Անօդաչու թռչող սարքի մնացորդնե-րը պատկերող տեսանկարը հրապարա-կուած է պաշտպանութեան բանակի Դի-մատետրի պաշտօնական էջով: ● Արցախի Գերագուծ Գործադրու-թեան նա-խագահի մամլոյ բանբեր Վահրամ Պո-ղոսեան Դիմատետրի իր էջով տեղեկա-ցուցած է, որ ռազմական գործողութիւ-նները աշխուժօրէն կը շարունակուին առաջնագծի ամբողջ երկայնքով: «Պաշտպանութեան բանակը թե՛ մարտեր կը մղէ Մարտունի շրջանի Շե-խեր եւ Ջիւախի գիւղերու մատուցներուն մէջ: Թշնամին ունի կենդանի ուժի մեծ կորուստներ», գրած է Պողոսեան: ● «Ինթերֆաքս»-ի հետ ունեցած զրոյ-ցին ընթացքին Չայնայի վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունելի նկատեց խա-ղաղակա ուժերու տեղակայումը Լեռնա-յին Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ, սակայն Նշեց, որ խաղաղակա հերթա-կազմին վերաբերեալ Ազրայեճանի պատ-կերացումները չեն համընկնիր այդ հար-ցով Չայնայի պատկերացումներուն: «Յոսիսը փոխգիշտումներու մա-սին, այստեղ նոյնպէս փոխգիշտման յարաբերակ կրնայ դառնալ ռուսական խաղաղակա ուժերու ներկայութիւնը: Ռուսիա լաւ յարաբերութիւններ ունի ե՛ւ Ազրայեճանի, ե՛ւ Չայնայի հետ: Շատ կարեւոր է հաշտի նստիլ շրջանի միւս երկիրներուն հետ, կարեւոր է, որ խաղա-ղակա ուժերը կայունացնեն տարա-ծաշրջանը, ոչ թէ հակառակը», ըսաւ Փաշինեան: Չայնայի վարչապետը աւելցուց, որ երբ ռազմական գործողութիւնները տակաւին ընթացքի մէջ են, բոլորովին տեղին է զիջումներու նման հարցեր ընտրել: ● Արցախի նախագահ Արայիկ Յարու-թիւնեան 22 հոկտեմբերին այցելեց սահ-մանագիծ եւ գիտնորութեան հետ հանդի-պումէն ետք որոշեց խրամատէն յատուկ տեսուողներով դիմել հայ ժողովուրդին: «Սիրելի՛ հայրենակիցներ՝ ուզում եմ ձեզ դիմել՝ առաջնագծին՝ հակառակոր-դից ընդամենը մի քանի հարիւր մետր հե-

ԶԱԹՈՒԼԻՆ ԶԻ ԲԱՅԱՌԵՐ ԱՐՅԱՒԻ ՄԵՋ... ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԸ Ա. ԷՋԷՆ

Շարունակուած Ա. Էջէն

«Արմենփրես» վկայակոչելով «ՌԻՎ Նովոսթի»-ն, կը հաղորդէ, որ Չայնային Նշած է, թէ տարածաշրջանին մէջ խա-ղաղութիւնը խաթարած են Ազրայե-ճանն ու Թուրքիան, ատոր համար ալ անոնք պէտք է յիշեցնեն, թէ «յետխորհրդ-րային տարածքին մէջ որ պետութիւնը կը մնայ ղեկավար»: Միաժամանակ, ան խոստովանած է, որ վստահ չէ, թէ Մոս-կուան ինչպէ՞ս պէտք է գործէ, սակայն հնարաւոր տարբերակներու շարքին Նշած է անկարգելաւորներու գործողու-թիւնը: «Արիւն կարելի է Չայնայի ռազ-մական ներուժի ցուցադրական ուժե-րացման տեսքով: ԶԿԳ-ին դիմելու տեսքով՝ անկարգելաւորներու գործո-րութեան միջոցով հայկական՝ ոչ թէ Լեռ-նային Ղարաբաղի, այլ հայկական տա-րածքը պաշտպանելու համար միջոց-ներ ձեռնարկելու անհրաժեշտութեան պատճառով: Օդային շրջափակման բացման միջոցով: Մենք Վրաստանին պէտք է յստակ բացատրենք, որ անհրա-ժեշտութեան պարագային պէտք է հան-գիստ ընդունի, որ անհրաժեշտ ուժերն ու միջոցները իր օդային տարածքով պէտք է ուղարկուին Չայնային: Այս որոշումը պարտադիր է, որովհետեւ խօսքը գիտնորութեան ամբողջ Կովկասի մէջ տարածման մասին է, ինչէն պիտի տուժեն թե՛ Ռուսիան, թե՛ Վրաստանը, թե՛ մնացեալը: Սպառնալիք կը յառաջա-նայ հայ բնակչութեան մեծ զանգուածի համար, որ պատմականօրէն կը յիշէ այդ տարածքին մէջ ցեղասպանութիւնը: Մենք պէտք է քայլերու ձեռնարկենք», Նշած է Զննաբանութեան Չայնայի: «Լազարեանք. ըլլալ» կայքը աւելի ուշ հաղորդեց, որ ան այդ տեսակետի վերաբերեալ թիրախացուածներէ խու-սափելու համար որոշ քաղաքացիութիւ-ններ ուղարկէ: «Լրագործին հետ զրոյցիս մէջ քանի մը անգամ ընդգծած եմ, որ խօսքը կրնայ ըլլալ ոչ թէ Ղարաբաղի տարածքին մէջ, այլ Չայնայի Գերագու-ծ Գործադրութեան մէջ մեր գիտնորական ներկայութեան ուժեղացման մասին, մասնաւոր Կովկասի մէջ ընդլայնուող եւ Թուրքիան ընդգրկող պատերազմի լոյսին տակ: «Կը շարունակեն մնալ այն կարծի-քն, որ անբնական է դրութիւնը, որուն

ՈՒՍԻՆԻՆ ԶԻ ԾՐԱԳՐԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻ ԿԱՏԱՐՄԱՐՈՒԹԵԱՆ ԳՕՏԻՆԻ ՄԵՋ
Ռուսիան չի ծրագրեր գործողութիւ-նը կատարել Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ: «Արմենփրես» կը հաղորդէ, որ այս մասին յայտարա-րած է Տումայի պաշտպանութեան յանձնարարութիւնի փոխնախագահ Անտոն Զարով: «Մեր քաղաքացիները լուստամի-ջոցներու կողմէ Ռուսիոյ պետական Տո-մայի երեսփոխան, ԱԳԻ Երկիրներու հիմնարկի տնօրէն Զննաբանութեան Չայ-թիւնի վերագրուած յայտարարու-թեան: «Ներկայիս Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ ռուսական զի-նակ ուժերու օտարագործում չի նախա-տեսուիր: Նշուած դիրքորոշումն շուրջ համաձայնութեան գոյացած է Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութեան հետ», ըսած է Զարովը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ... ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԸ Ա. ԷՋԷՆ

Շարունակուած Ա. Էջէն

Այս անգամ յիշեալ համագումարը կազմակերպու-ած էր չորս միջազգային կազմակերպութիւններու կողմէ.- Ապտալա Բ. թագաւորի հիմնած միջկրօնա-կան ու մշակութային կեդրոն (KAICID), G20 միջկրո-նական ֆորում (G20 interfaith forum), Միացեալ ազ-գերու կազմակերպութեան քաղաքակրթութիւննե-րու երկխօսութեան բաժանմունք (UNAOC) եւ Հան-րային հիւանդութեանց կանխարգիւման կեդրոն (NICRD): G20 պետական ղեկավարներու 2019-ի տարե-կան համագումարը տեղի ունեցած էր Օսթաքայի (Ճափոն) մէջ: Այս տարի տեղի պիտի ունենայ Ռիա-տի (Սեուտական Արաբիա) մէջ 21-22 նոյեմբերին: Չայնայի վարչապետը տեղի ունեցաւ առջանց: Անոր մասնակցեցան աւելի քան 300 քաղաքացիական, հասարակական ու կրօնական կազմակերպութիւ-ններ, նաեւ միջազգային համալսարանային փորձա-գետներ ու մասնագետներ: Չայնայի վարչապետը չորս զը-խաւոր բաժիններէ բաղկացած էր, եւ իւրաքանչիւր օր յատկացուած էր մէկ բաժնի նկարագրու կերպաց-ման ու քննարկման: 1) «Քորոնա» ժախըր ու անոր հետեւանքները չեզոքացնելու միջոցները: 2) Կնոջ, երիտասարդութեան, գաղթականներուն, ցեղա-պաշտութեան, աղքատութեան, դաստիարակու-թեան առնչուած հարցեր: 3) Կենսոլորտային, մարդ-կային իրաւանց, կրօնական, ազատութեան, ինքնու-րոշման հետ աղերս ունեցող խնդիրներ: 4) Կրօնի դերը ընկերութիւնը յուզող հարցերու լուծման գծով: Վեհափառ հայրապետը իրաւիրուած էր իբրեւ չորրորդ բաժնի գլխաւոր դասախօս: Իր խօսքին սկիզբը վեհափառը շեշտեց, որ ճիշդ չէ կրօնի դերը սահմանափակել սոսկ տագնապի լուծման շրջագի-ծին մէջ, այլ անհրաժեշտ է գայն տեսնել առաջին հերթին տագնապի կանխարգիւման մէջ: Դո՛ւս կը կայանայ կրօնի եզակի դերը, ընդգծեց վեհափառ հայրապետը ու միաժամանակ յայտնեց, թէ՛ կրօն-խարգիւման ու լուծման աշխատանքները հարկ է արժեւորել ու իրագործել նոյն շրջագիծին մէջ՝ իբրեւ գիրար ամբողջացնող մօտեցումներ:

Այս ընդհանուր խորհրդակցութիւնի վրայ վեհափա-ռը ըսաւ, թէ անհրաժեշտ է յստակ գանազանութիւն մը դնել բնութեան հետ աղերս ունեցող տագնապնե-րուն (օրինակ՝ երկրաշարժ), որոնք պատճառ մար-դը չէ, եւ մարդու առնչուած տագնապներուն (օրի-նակ՝ կենսոլորտային հարցեր ու պատերազմներ), որոնք պատճառ մարդն է: Կրօնին կրօնապատկա-րէ-րը անհրաժեշտ է քննարկել տուեալ տագնապի բնոյթի լոյսին տակ: Տագնապ ու կանխարգիւման գծով վեհափառ հայրապետը հետեւեալ երկու օրի-նակները թուեց.- Առաջին, բժշկական գիտութեանց համաձայն, կարելի է շարք մը հիւանդութիւններու առաջը անել՝ մեր ապրելակերպը փոխելով: Երկ-րորդ, ընկերութիւնը դիմագրաւող շարք մը տագ-նապներ կանխելը կարելի է արդարութիւն հաս-տատելով կամ ժողովուրդներու ինքնորոշման իրա-ւունքը ճանչնալով եւ կամ՝ մարդկային իրաւունքնե-րը յարգելով: